

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԲՈՎՅԱՆԻ N5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

20.05.2014 թ.

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա.Հարությունյանն այցելել է Աբովյանի N 5 հիմնական դպրոց:

Կոտայքի մարզպետը շրջել է դպրոցի մասնաշենքում, տեղում ծանոթացել վերջինիս պայմաններին և հնարավորություններին, ինչպես նաև ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական մեթոդաբանությանը և ուղղություններին:

Մարզպետն այցելության ընթացքում զրուցել է նաև դպրոցի աշակերտների հետ, այնուհետև հանդիպում ունեցել կրթօջախի մանկավարժների հետ՝ արտահայտելով իր հստակ դիրքորոշումները կրթական գործընթացների արդյունավետ իրականացման, ներդպրոցական աշխատանքների պատշաճ կազմակերպման ուղղությամբ և ընդգծել, որ վերջիններիս հիմքում պետք է դրված լինեն բացառապես պետական կրթական քաղաքականություն բոլոր գերակայությունները:

Դպրոցի մանկավարժների հետ հանդիպման ընթացքում մարզպետ Ա. Հարությունյանը քննարկել է նաև ուսումնական տարվա ավարտին վերաբերվող մի շարք կազմակերպական բնույթի հարցեր ևս:

Ամփոփելով աշխատանքային այցելության և հանդիպման արդյունքները՝ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն իր խոսքում նկատել է, որ դպրոցում անհրաժեշտ է իրականացնել ինչպես ընթացիկ հիմնանորոգման, ջեռուցման համակարգի արդիականացման, այնպես էլ դպրոցական շենքի համար կարևորագույն գործոն համարվող ամրացման աշխատանքները, որոնք ներառվելու են համապատասխան պետական ծրագրերում: